



Երևան, 11 Յունիոն, 2021

ՏԵՐՈՒԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմասպութիւն Հօր Յիսուս, կուր ինձ իմասպութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 20

ԱՂՋԹՔ ԹԱԳԱԼԻՈՐԻՆ ՀԱՄԱՐ

Տերը թող լսէ աղօթքներդ, երբոր անձկութեան մէջ ես.

մեր հայրերուն Աստուածը ինք թող պաշտպան ըլլայ քեզի:

Քեզի օգնութիւն թող դրկէ իր սրբարանէն,

եւ Սիոնէն քեզ զօրացնէ:

Տերը թող յիշէ քու նուէրներդ,

եւ զոհերդ ընդունելի համարէ:

Տերը սրտիդ համեմատ թող տայ քեզի,

եւ քու բոլոր փափաքներդ կատարէ:

Մենք քու բերած փրկութեամբդ պիտի ցնծանք,

եւ Աստուծոյդ յաղթանակին դրօշը պիտի կրենք:

Տերը կատարէ բոլոր խնդրանքներդ:

Յիմա գիտցայ որ Տերը կը փրկէ իր օծեալը.

անոր աղօթքին պատասխան կու տայ իր սուրբ երկինքէն,

եւ իր զօրութեամբ անոր մեծամեծ յաղթանակներ կը պարզեւէ:

Ոնանք իրենց պատերազմի կառքերուն,

ուրիշներ ձիերու կ'ապաւինին,

բայց մենք Աստուծոյ՝ մեր Տիրոջ կ'ապաւինինք:

Անոնք պիտի ծունկի գաճ եւ իյնան,

մինչ մենք կանգուն պիտի մնանք, գլխունիս բարձր:

Ո՞ւ Տէր, փրկէ թագաւորը.

Երբ քեզ կանչենք՝ պատասխանէ մեր աղօթքներուն:

ՀԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Վ մէնասուրք Երրորդութիւն, առուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, նսջեցելոց արքայութիւն:

Արի Վասուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երթեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ իման բազմամեղիս:

ՕՐՈՒԱՆ ՆԻՒԹԸ
ՀԱՅ
ԴԱՍԻԵԼԻ ՄԱՐԳԱՐԷՇՈՒԹԻՒՆ
10 ԳԼԽ

ԴԱՍԻԵԼԻ ՏԵՍԻԼՔԸ ՏԻԳՐԻՍ ԳԵՏԻՆ ՔՈՎ (10.1-21)

Տեսիլքներն ու պատգամները կը շարունակուին դրուիլ Դանիէլին յառաջիկային կապարուելիք դրաբերու մասին: Դեպքեր, որոնց դարողութիւնը մեծ է, որուն համար ալ Դանիէլ երեք շաբաթ սուզ կը պահէ, եւ ինքզինք հեռու կը պահէ ախորժեկի կերակուրներէն ու խմելիքներէն, այլ խօսքով ծոմ: Այսպես սուզ եւ ծոմ զիրար լրացնող, ամբողջացնող եզրեր են, ինչպէս Քրիստոս Ինք եւս նոյն արդայալիքութիւնը պիտի ունենար, երբ Փարիսեցիները պիտի ըստին, թէ քու աշակերպներդ ծոմ չեն պահեր. «Կարելի՞ է հարսանիքի հրայիրեազներուն ըսեղ որ սուզ պահեն, երբ դակաւին Փեսան իրենց հեկ է: Ժամանակ պիտի զայ, երբ փեսան պիտի վերցուի իրենցմէ, եւ այն ապեն իրենք ալ ծոմ պիտի պահեն» (Մաքրելոս 9:15):

Ահա Դանիէլ աքքերը վերցուց ու դեսաւ «կպաւ հազած ու մեջքը Ոփազի ոսկիէ զօրի կապած մարդ մը: Անոր մարմինը ոսկեքարի պէս ու երեսը փայլակի երեւոյթ ուներ: Ազքերը կրակի բոցերու պէս եւ թեւերն ու ոպքերը փայլուն պղինձի գոյնի նման էին: Իր ձայնը բազմութեան ձայնին պէս»: Արդայայքութիւն մը, որուն նմանը մենք կը գտնենք Յայքնութիւն Յովիաննու զիրքին մեջ (1:12-15): Այս արդայայքութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ Յիսուս Քրիստոսը Ինք: Ազքերուն կրակի բոցի պէս ըլլալը, որ կը նշանակէ անոնց թափանցիկութիւնը, որ կը թափանցէ ամէն ինչ, որ կը դեսնէ ամէն ինչ: Անոր ձեռքերն ու ոպքերը փայլուն պղինձի նման, որ կը նշանակէ Անոնց զօրութիւնը:

Երկրորդ, «Այս դեսիլքը միայն ես՝ Դանիէլ դեսայ: Ձեւս ինձի հեկ եղող մարդիկը դեսիլքը չփեսան, սակայն շաբ վախցան ու փախան»: Այնպէս ինչպէս Սօղոսի պարագային, Դամասկոսի ճամբուն վրայ դեսած դեսիլքը. «Սօղոսի ընկերացող մարդիկը անշշունչ կեցեր էին. միայն ձայնը կը լսէին, բայց ոեւէ մէկը չէին դեսներ» (Գործք 9:7): Սա կը նշանակէ Դանիէլ ինք միայն կրացաւ դեսնել, իսկ միւսներու պարագային միայն ձայն մը լսեցին, բայց ոչ խօսակցութիւն: Այնպէս ինչպէս Յովիաննէս Մկրտիչի պարագային ինք դեսաւ Սուրբ Հոգին որ կ'իշներ աղաւնի նման Քրիստոսի վրայ, իսկ իր շուրջ եղողները չփեսան (Յովի 1:33):

Երրորդ, հակառակ անոր որ միայն Դանիէլ դեսաւ ու լսեց այս բոլորը, սակայն ինք եւս թմրած երեսի վրայ ինկաւ: Սա ցոյց կու վրայ, դեսիլքին ահաւորութիւնը, որուն դիմաց մարդ արարածը ի վիճակի չէ: Այնպէս ինչպէս չենք կրնար արեգակին նայի մեր սովորական ազքերով, որքան առաել եւս նայելու արեգակի սպեղծիչին, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսին: «Հակառակ այս վեհութեան ու ահաւորութեան, Տէրը պարբռասպ է կանգնեցնելու, որպէսզի կարենանքն դեսնել, լսել ու հասկնալ թէ Տէրը ինչ պարբռասպած է: «Այն ապեն ինձի ձեռք մը դպաւ ու զիս ծունկերուս ու ձեռքերուս թայտերուն վրայ վերցուց»: Նոյնանման արդայայքութիւն մը որ կը կարդանք դարձեալ Յայքնութիւն Յովիաննու զիրքին մեջ. «Երբ զայն դեսայ, մեռելի նման ինկայ անոր ոպքեր առջեւ: Անիկա իր աջ ձեռքը դրաւ վրաս եւ ըսա» (1:17): Ահա Քրիստոս է եւ Քրիստոսով է որ անկեալ մարդը կը վերականգնի:

Դանիէլի աղօթքը լսելի կը դառնայ Ասքուծոյ եւ ահա կը պարասիանուի, որովհենքեւ Դանիէլ առաջին օրէն ի վեր իր սիրով դուռ կամ հասկնալու եւ իր անձը խոնարհեցուց Ասքուծոյ առջեւ, եւ այդպիսին Ասքուծոյ աջքին հաճելի երեւաց, սիրելի մարդ:

Տեսիլքին եւ պատգամին ահաւորութիւնը Դանիէլը դեկարացուց, համր դարձուց, բայց ահա մեր դեկարութեան մեջ է որ կը յայքնուի Տիրոջ վառքը եւ զօրութիւնը, ինչպէս պիտի ըստ Տէրը Պողոս Առաքեալին: Ահա Տէրը կը զօրացնէ Դանիէլը, որպէսզի կարենայ լսել Տիրոջ պարգամները թէ ինչ պիտի պարահի զալիքին, վերջին ժամանակներուն: